

FMD K&L Europe-ը

հրավիրում է

աշխատանքի

-դեղագիտության,

- քիմիայի,

-կենսաբանության,

-բժշկագիտության

մասնագետների:



## Բնական գիտությունների մասնագետ

ԷՖ ԷՄ ԴԻ ՔԵՑ ԷԼ ԵՎՐՈՊԱ-ն փնտրում է էնտուզիաստ մասնագետների բնական գիտությունների ոլորտում: Մենք ոչ միայն աշխատանք ենք ապահովում, այլ նաև՝ կարիերա: Կազմակերպությունը հնարավորություն է տալիս Ձեզ դառնալու ամենամեծ Պայմանագրային հետազոտական կազմակերպություններից (ՊՀԿ) մեկի անդամը:

<b>Հաստիք</b>	<b><u>Դեղերի գրանցման մասնագետ</u></b>
<b>Տնտրություն</b>	Երկարաժամկետ, լիադրույք
<b>Վերջնաժամկետ</b>	Հնարավորինս շուտ, մինչև հաստիքների համալրումը
<b>Հասցե</b>	Կոմիտասի պող. 1, 0033 Երևան, ՀՀ

- ՊԱՀԱՆՁՆԵՐ՝**
1. Բնագիտական կրթություն (դեղագիտություն, քիմիա, կենսաբանություն, բժշկագիտություն)
  2. Աշխատանքային փորձը տվյալ ոլորտում դիտվում է որպես առավելություն
  3. Դեղերի շրջանառության կարգավորման հետ կապված օրենսդրության իմացությունը դիտվում է որպես առավելություն
  4. Անգլերեն լեզվի գերազանց իմացություն (գրավոր և բանավոր)
  5. Պատասխանատվության և ազնվության զգացում, ճշտապահություն, կոնֆիդենցիալ (գաղտնի) տեղեկատվության պահպանման ունակություն
  6. Թիմային աշխատանքի, սեղմ ժամկետներում և ճնշման տակ աշխատելու ունակություն

- Աշխատանքի նկարագրություն**
- Պատասխանատվությամբ կատարել տրված հանձնարարությունները
  - Ունենալ բավարար մասնագիտական գիտելիքներ և փորձ՝ փորձագետի և/կամ մենեջերի հսկողության ներքո աշխատելու համար
  - Բոլոր գործողություններն ու հանձնարարություններն իրականացնել գլոբալ, տարածաշրջանային և տեղական ընթացակարգերին, ԳՄԸ-րին և աշխատանքային հրահանգներին համապատասխան
  - Կատարել գլոբալ, տարածաշրջանային և տեղական տվյալների բազաների պարբերական թարմացում
  - Կատարել դեղերի փաթեթների գծապատկերների, ներդիր թերթիկների և գովազդային նյութերի պատրաստում և ստուգում՝ տեղական օրենսդրական պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով
  - Կատարել դեղերի փաստաթղթերի էլեկտրոնային և թղթային փաթեթների պատրաստում և հրապարակում՝ գրանցման պահանջներին համապատասխան կարգավորող մարմիններին ներկայացնելու նպատակով
  - Կատարել գրանցման փաստաթղթերի պահպանում և արխիվացում՝ ընկերության ընթացակարգերին համապատասխան
  - Կազմել համառոտագրեր, հաշվետվություններ, արձանագրություններ, աղյուսակներ, պլայդներ

- Իրականացնել որոնումներ՝ պահանջված տեղեկատվություններ ստանալու նպատակով
- Ապահովել բոլոր գործողությունների/հանձնարարությունների որակը և համապատասխանությունն ընկերության ընթացակարգերին

**ԴԻՄԵԼ՝**

Խնդրում ենք ուղարկել Ձեր CV-ն **անզերեկով** հետևյալ էլ . հասցեին՝ [anahit.gevorgyan@fountain-med.com](mailto:anahit.gevorgyan@fountain-med.com)՝ նշելով **հաստիքի անվանումը նամակի վերնագրում (Դեղերի գրանցման մասնագետ)**:

**ԷՖ ԷՄ ԴԻ ՔԵՅ ԷԼ ԵՎՐՈՊԱ ՍՊԸ-ի մասին**

ԷՖ ԷՄ ԴԻ ՔԵՅ ԷԼ ԵՎՐՈՊԱ ՍՊԸ-ն միջազգային ՊՀԿ է, որն առաջարկում է ICH GCP- համատեղելի կլինիկական հետազոտական ծառայությունների ամբողջական փաթեթ միջազգային դեղագործական և բուժօգնության ընկերությունների համար, որոնք ցանկանում են իրենց բժշկական արտադրանքը գրանցել ԱՄՆ-ում, Եվրոպայում և Արևելյան Ասիայում (ներառյալ Չինաստան, Հոնկոնգ, Թայվան և Հարավային Կորեա): Այն նոր ընկերություն է ՀՀ-ում և ներկայումս ունի 180 աշխատակից՝ շատ արագ աճող ներուժով: Հավատացած ենք, որ ձեզանից յուրաքանչյուրը կարող է նպաստել իր իսկ կարիերայի աճին: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք կապվել . **060-54-15-15**.

<http://www.fountain-med.com>

<http://www.kserv.com>